

զօրքի հետ Երէզ հասած օրը «գոնիեա զայն զիշեր յագեալ քեով, և հաւանեցուցեալ զարսն ի գեղջն Երիզա», իւր զօրքով ու Երիզացի շինականներով թշշնամու «բանակի վրայ հասնում է զիշերը» և ահարեկում նրանց (Փարպ. Գ. ձր. էջ 149-150): Եւ ահա «Վահան Մամիկոնեանն դարձեալ ի կոտորած թշնամեացն՝ երթեալ հանցչեր զմացեալ մասն ի զիշերոն, յՈղին գեղջն, զոր Շտեայ անուանն» (Ալդ. Գ. ձր. 150): Ալդ եթէ Վահանը Երիզացի զիշերոյին կոսից յետոյ դեռ զիշերոյաց մնացեալ մասն անց է կացնում «Ողին, որ և Շտեայ» զիւղում, ապա ուրեմն այս մէկ թէ երկու զիւղը շատ ու շատ մօտիկ են Արշամունիքի

Երէզ-Երիզային. Հետեարար և այս զաւառում են գտնւում, Եւ վերջապէս մի այլ պարագայ: Գդիհոն Սիւնու վիրաւուրումից և սատակումից յետոյ նապուն Միհրանեանը տեսնելով որ Վահանը «Միհայն երեսուն հոգով երեց և չորս հազարի վրայ յարձակուելով՝ խորտակեց բոլորի սրտերը», շարունակում է. «Իսկ այժմ... երկնչիմ, մի զուցէ... առաքեալ ի մերձակայ սահմանակից տեղեաց առ հայ մարդիկ զաւառին Անձուայ և կամ Մոփաց և Հաշտենից, և առեալ ի նոցանէ օգնականն, որպէս յիւրոց ազգականաց՝ չկարիցեմը և զապրումն անձանց ... զբանել անուեհտեւ» (Փարպ. Գ. ձր. էջ. 153-154):

(Հարունակելի)

ԱՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՑ

Հ. Մ. Զ Ա Մ Ձ Ե Ա Ն Ի Մ Ի Ն Ա Մ Ա Կ Ը

Բազմազետ յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում Հ. Միքայէլ Զամշեանի մի նամակը, ուղղուած Նոր-Զուղայեցի Պ. Յարութիւն Սահակեանին, որի մասին յիշատակում է Նոր-Զուղայեցի պատմաբան Յարութիւն Տէր Յովհանեանը 1880թ. իւր Ն.-Զուղայի պատմութեան «Ողդ»ում:

Յարութիւն Տ. Յովհանեանը, որ հայ բանասիրաւթեան շատ խոշոր ծառայութիւն է մատուցել իւր յիշեալ հոյակապ զործով («Պատմութիւն Նոր Զուղայոց որ յԱսպահն») և գեր ցոտ արժանաւոյն զնահատուած չէ, նամակի մասին յայտնում է. «Ճօրինակ Թղթոյ գտի ի տան Տէր Սարգիս քահանայի Տէր Մատէկուտեան՝»:

Վերինը, Ն.-Զուղայի Ամենափրկչեան վանիք վիշտասանը կատարած պրատումենիք ժամանակ մեր ձեռքն ընկաւ և մի թուղթ, որ այլ բան չէ, եթէ ոչ վերոյիշեալ նամակի պատճէնը, որի

տակ կարելի է կարդալ. «յիսկական ընազրոյն ուղիղ օրինակեցի Յարութիւն թ. Յարութիւննանց»: Սա արգէն նոյն Յարութիւն Տէր Յովհանեանցն է, նոր Զուղայի պատմութեան համբաւաւոր հնդիսակը, որ Կորստից փրկել է՝ գեթ Վմինափրկչեան դիւնանի Թղթերի շեղակոյտի մէջ մոցնելով մեզ հետաքրքրող դոկումենտը: Նամակը մնիք ընդօրինակում ենք անփոփոխ, չարքարելով նոյն իսկ մէկ երկու ակնյայտնի լարս և շալամ, որ նկատելի է ընթերցանութեան ժամանակ:

Ինչ վերաբերում է «Քիրիստոսաէր և բարեպաշտն Պ. Յարութիւն Սահակեանին», որին ուղղուած է նամակը, նրա Նկատմար Զուղայում կենզանի յիշողութեան թելերը մնիք խըզուած գտանք, ուստի ստիպուած ենք նրա մասին բաւականակալ Յարութիւն Տէր Յովհանեանի հաղործած վերաբրտագրելով. «Յարութիւն Սահակեան էր Զուղայեցի ծնեալ ի Բասրա,

1. «Պատմ. Նոր Զուղայոց որ յԱսպահն», Հատ. Ա. էջ 4; ձանօթ. (1). — Սարգիս թց. Տէր Մատէկուտեանը ժամանակի նամանաւոր հոգեւորականներից է եղել. Ամենափրկչեան վանաւոյն նրա ձեռքում կենարու-

նացած է եղել կալուածաթղթերի զորութիւնը, որի համար բացի պահանջուած ունակութիւններից անհրաժեշտ էր պարսկենիք և պարսկական օրբնեների զիւռութիւնը:

և ըստ գիտութեան մասին համբաւաւոր ոք, որ զավանեցաւ ի բումբայի, թողով զկնի իւր զհելինակութիւնս արձակ և ոտանաւոր գործոց»:

Համակի մէջ շօշափուած են մի շարք հարցեր, որոց պատասխանը խնդրելի է մեր բանասիրութեան համար, այսպէս է աւագու և Աւագու քահանաների երկարութիւնների հարցը: Համակը, որպէս հարազատազոյն աղբեր, լոյս է սփոռու հեղինակի Հայոց պատմութեան մօր պատմական զրականութիւն այդ խոշրազոյն յիշտակարանի աղբիւրների և զրութեան եղանակի, ինչպէս և առնասարակ Հ. Մ. Զամշնակի պատմազրական ըմբռնութեան վրայ և զերջապէս մասնագէտներին և հետարգրութղղներին հացորդում է աստղաբաշխական և սումարազրտական այն տուեաները, որոնցմով զեկավարում էին Զամշեան և նրա համարզները շուրջ մէկ և կէս դար սրանից առաջ:

Բ. ԱՐԱՎԱՆԻԱՆ

Քրիստոսաւոր և բարեպաշտօն Պարոն թարութիւն Ասահակեան, ի Տէր ինպէտ:

Ընդ անծանօթի անձին իրը ընդ ծանօթի լինել խօսակից՝ մտերիմ ծանօթութեան ընծայէ բողբոջ, զի թէ առ նախնեօր իրը առ Սոկրատեաւ զստոյզն ծանօթութիւն յանդիմանակաց առն, ի նորուն և եթ համարէին զտանել խօսից, քանի ևս զտարակայիցն՝ թէ զնստելութիւն ոք ինդրէ խօսիցն զիպողութեամբ հարկի ի նոցին բերիլ ընտանութիւն: Սովին այսովէկ աւաղիկ և իմ ընտանութիւն բացեալ մուտ առ Ալիքելի՝ ստիպիմ իրը ընդ բազմաժամանակեայդ մտերմացելոյ զոյզն զրութեամբ բանախօսիլ յօրդրեալ ի բանից մերում բարեկամի Պարոն Ստեփանոսի Բարիկեան, առ որ երկու ինչ կարեռ զրեալ էր բարեպաշտութիւն ձեր: Ալուջինն է աշխատութիւն ձեր ի զտանել և ի զտասաւորել զկարգ թագաւորացն պարափց. զայսմանէ բազում անզամ զբեցի ես առ Պարոն Ստեփանոսս և աղաչանօք խնդրեցի ի նմանէ հանել ի պատմազրութեանց պարսից՝ զոնէ միայն զանուանս թագաւորացն հանդերձ թուով ամաց նոցին

և նա յետ բազում անզամ բազում ինչ զբելոյ առ իս, զրեաց ևս ի մօտոյ՝ թէ զբեցի ի Ջուզայ առ Պարոն թարութիւն Ասահակեան, զի նա ասէ կարէ կասարել զայդ բայ ինդիր. և ես ուրախ եղէ յոյժ, և օր ըստ օրէ սպասէի և սպասեմ զտանել զինդրելիս իմ իսկ թէ վասն ինչ սպատաճութիւն զայդ ծանիր. զի մեց շարազրեցաց աստ զպատմութիւն հայոց ի վեց զիրս և յերիս հատորա երկար ցննութեամբ և բազում տաժանմամբ. համեմատելով զպատմութիւն ազգին մերոյ ընդ պատմութիւնս այլոց ազգաց բազմաց, այս ինցն՝ հոռվմայեցոց, հելլենացոց, ասորուց, հազարացոց և այլն, ունելով ի ձեռս և զբազում պատմազիրս հայոց՝ զորոց զանուանս առանձին թղթով եղից աստ. թող զայլ հազարաւոր յիշտակարանս, և զբազում հին ձառընտիրս, և զբազմազիմ պատմաբանական սոտանաւորս և զողնուազիրս հայրապետաց, թագաւորաց, վարդապետաց, և այլն: Այսօք կարգեցաք զամննայն, ըստ ամենայն մասանց ցննելով, և ընդ մադ անցուցանելով զստոյզն ի սոտոյ, որոշելով, և զպիտանին յանպիտանեաց զտանելով, և յամննայնի զամննայն անաշչառութեամբ՝ առանց ի կողմէ ինչ հակելոյ առաջի զնելով: Արդ՝ ի կարգել մեր զայս ամենայն այսպէս՝ անհամար արգելը և խոշնդոտն ելին ընդ առաջ ըստ զտանազն զլիոց, յորոց մի էր և կարգ թագաւորացն պարսից. զի որովհետեւ պատմութիւնց հայոց թագաւորաց ի բազում իրս կապակցեալ են ընդ պատմութիւնս թագաւորացն պարսից, անհնարին է զմերն ուղղի կարգել առանց գտանելոյ զուղղի կարգ նոցաւ: ի հին պատմազիրս մեր զտանին այո՛ պէսպէս կարգ թագաւորացն պարսից, որք առանձինն առեալ՝ երկնին լինել ճշմարիտ և սակայն եթէ ընդ միմեանս բաղդատեսցին, ի բազում տեղիս վրիպին, և ընդ միմեանս անհամաձայն զտանին: Այլ այս չէ ինչ, կայ այլ մեծ դժմարութիւն իրը զի եթէ ընդ պատմութիւնս այլոց ազգաց համեմատեսցին, ամենկին այլ ազգ զտանին, և

անհնարին է մարդկային մտաց համաձայն նեցուցանել զայնոսիկ ընդ միմեանս, բայց եթէ մեկնութեամբ, Եւ չէ ևս հնար միոյն միայն հետեւել և զմիւսն թողուլ, զի ի բաղում տեղիս ժամանակակիցք են զրօցքն և ականատես և երեւելի պատմիչը, զորոց զրանոն չէ մարթ սուտ հանել յայսպիսիս, զի յայսնի են: Ապա թէ ճշմարիտ համարեացին զորոց զրեն նոցա, ստին յայնժամ պատմութիւնը հայոց. իսկ թէ զնայոցն ճշմարիտ համարեացիս՝ մանաւանդ զայնոսիկ՝ որց յերեւելի անձանց են զրեալ, ստին պատմութիւնը այլոց: Ցայսպիսի լապիւրինզոս ըմբռնեալ մեր՝ բազմապատիկ ցննութեամբ ջանացաց ըստ կարի միարանել զամենայն պէսպէս չափմամբ և մեկնութեամբ, զորոց զուզիդ կարզն դասաւորեցաց յաւարտ երրորդ հատորին: Ի վերայ այսր ամենայնի յուսայի՝ թէ զուցէ յայժմու ժամանակիս զացի ի զիրոց պարսից և այլ ինչ ստոյդ և ուղիղ, որ նպաստ ընծայեսէ մեզ. այլ որպէս երեւի ի նոսա ևս ոչ զոյ: Կան առ մեզ բազում բանք հանեալը թարգմանաւար ի զրոցն պարսից ի լատին լեզու, բայց ի նոսին ևս ոչ զտանեմք զնշմարիտ ինչ: Այժմ այսչափ ինչ միայն ինդրեմ յազնուութենէ քումնէ, զի որպէս և զացի՝ թէ ճշմարիտ և թէ սուտ ի բռն զրոց նոցա հանցես ինձ միայն զկարգ անուանց թագաւորացն պարսից թուականս նոցին, և ըստ հնչման նոցա առանց ինչ խառնելոյ ի նոսա բան ինչ ի զրոցն հայոց, և այս՝ յարշակայ պարթեէ մինչև ի քէրիմիան որ տիրեաց յաւուլս մեր Եթէ զամենայն յէ հնար, զո՞նէ որչափ հնար իցէ: Այլ ծանիր ևս, զի տարի մի հազիւ կարեմ սպասել այդմ կարզի, զի թէ աւելի բան զտարի մի յամեսցի, ոչ ևս ծառայէ այն այսմ մերոյ պատմագրութեան. քանզի արդէն տպագրութիւն միոյն հատորին աւարտեալ է ամենայն մասամբ, սկսեալ ի հայկայ, մանաւանդ յադամայ մինչև ցրարձումն թագաւորութեան արշակունեաց: Նոյնպէս և երկրորդ հատութին տպագրութիւն եղեալ է այլ գեռ պատ-

կերն չէ լրացեալ, սկսեալ յիշխանութենէ մարզպանաց մինչ ցրարձումն թագաւորութեան բագրատունեաց: Այժմ սկիզբն է տպագրութեան երրորդ հատորին՝ սկսեալ յիշխանութենէ Ծուրինեանց մինչև ցաւուրս մեր յամի Ցեառն 1796: Ի վախճան այսր երրորդ հատորի զնին ժամանակագրական պահւակը առ ի չափել զժամանակ իւրաքանչիւր թագաւորաց, կաթողիկոսաց, և այն, և ապա զնին պէս պէս կարզը զաւազանաց այլեւայլ իշխանութեանց, ընդ որս և կարզ թագաւորացն պարսից: Եւ մեց փափաքէաց ի նոյն համեմատել և ի նոյնս յարել զայդ կարզ ևս, զոր առացելոց է ազնուութիւնն՝ առ ի զփտելոյ՝ թէ զինչ տարրերութիւն կայ ընդ այս և ընդ այն: — Զայլ ինչ ևս խնդրեալ էի ի Պարոն Ստեֆաննոսէն, զի լուեալ էի թէ յետ առացել պատմագրի ցահանայ ոմն յակոր անուն և այլ քահանայ ոմն աւետից անուն, եկեալ ի ջուզ՝ զբեալ են զանցս ջուզայու: Եթէ յիրաւի գտցի այդպիսի զրուած տացես օրինակել, և որինչ ծախը զնան՝ պատրաստ եմք վճարել, որով ճանապարհաւ և կամցիս. միայն թէ փութով հասցէ առ մեզ: Ջայսոսիկ խնդրեցի յազնուութենէղ համարձակ, վատահացեալ ի սէր բարերաշտութենէղ զոր ունին՝ ի վերայ ազգին մերոյ. որպէս և մեր այս փոյթ ևս որով ծեռն արկաց յայսպիսի զործ տարժանական՝ ոչ է վասն մեր, այլ միայն վասն օգտի ազգիս հայոց:

Մատեայց այժմ յերկրորդ գլուխ բանից՝ ի խնդրի ազնուութեանդ, զոր զրեալ էիր առ Պարոն Ստեֆաննոսն, թէ ըստ հաշուփ զգիզորեան նոր տումարի, որպէս մարթիցէ գտանել զննունդ լուսնի համաձայն օրացուցին. նոյնպէս թէ զիամրդ պարտիցէ գտանել զիսաւարումն լուսնի և արեգակնակ: Մանիք՝ զի ծնունդ լուսնի կըրկնակի գտանի, մի՛ ըստ հաշուփ ամսոց և աւուրց, և միւս ևս ըստ իրին և ըստ որում է յինքեան: Արաջննն լինի ի ձեռն վերացրաց ըստ չափման տումարին որ կայ տպագրեալ յաւարտ սաղմոսին, և

առաւել ևս յաւարտ փոքր ժամագրցին. սովին հաշուով և կանոնաւ գտանին նաև ըստ զրիգորեան տումարին ըստ վերազրի լատինացւոց, որպէս զնի յաւարտ բուրաստան ազօթից գրեին: իսկ երկրորդ եղանակն ոչ փակի ընդ այսպիսի վերադրական կանոնաւ, և ոչ գտանի պարզ տումարական արուեստի. այլ ի ձեռն աստղաբաշխական գիտութեան. այսպէս լինի և գիւտ խաւարման լուսնի և արեգական և մեր ևս այսու աստղաբաշխական զիտութեամբ գտանեմք և զնեմց յօրացւոցի, ոչ ի զրիանցն հայոց, այլ լատինացւոց, որ[ո՞ց] միջի կան անհամար զրեանց ի Քրիստ այսպիսի իրաց: Մեզ զիւրին էր հայերէն ևս զարադրել և տպել. բայց ի զուր է, զի սակաւը զնեն, վասն զի ոչ կարեն առանց ուսուցչի իմանալ: Մանաւանդ առ ի իմանալ զայն հարկ է նախքան տեղեակ լինել թուարանութեան ոչ արհեստին, այլ զիտութեանն: Նոյնպէս պարտ է տեղեակ լինել չափարանութեան և տեղաշափութեան, որոց ծանօթութիւն ոչ գտանի այժմ ի հայս: Բայց ի վերաց այսր ամենայնի առ ի լնուլ զինդիր բարեկամիդ ջանացուց համառօտիւ իմն և պարզ ոճիւ զարադրել կանոն ինչ հանդերձ աղիւսակօց. և առաքեցից առ քեզ. և կարծեմ թէ փոքր մի աշխատանօց կարացեն հասու լինել և գտանել՝ զոր խընդրես. ուստի անհոգ լիբ՝ զի կատարեմ զինդիր ըստ անտարակոյս. այլ ազնուութիւնն պարտ է փոքր մի ժամանակ սպասել այսմ: Ողջոյն սիրոյ ամենայն ծանօթից: Բազում սիրով և օքնութեամբ ողջոյն մատուցանէ քեզ գերապատիւ արրայ հայրն մեր Ստեփաննոս բարունապետն ո՛վ լիբ:

Բարեկամաշտութեան քում

Ն. Ե. Հ. Միհրան, Վարդապետ
Մարտունան Զավանես

Ի յունվարի 19. 1797 ի Վէճաբէկ

Ի վանս Արքոյն Ղազարու:

Պատմագիրք հայոց զորս ունիմք առ մեզ

Ազարանգերու:

Ձենոր, եպս. աշակերտ լուսաւորյի:

Բուզանդ, որ և Փոսոս Բուզանդացի:

Կորիսե այր սրանցելի:

Մովսէ խորենացի:

Եղիշ աշակերտակից խորենացոյն:

Ղազար փարպեցի:

Թուման արծունի (անկատար):

Յոհաննե Մամիկոնեան

Յոհաննե կարողիկոս:

Մեսրոպ երեց:

Մտեփաննոս ասողիկ:

Արիստակոս. Մատրենս ուսհայեցի:

Գրիգոր երեց:

Մամոնէ երեց անեցի:

Ներսէս շնորհալի:

Կիրակոս Գանձակեցի:

Վարդան բարձրբերցի:

Մազարիայ արեղայ:

Վահրամ վարդապետ:

Թովմա Մեծոփեցի:

Ռոպեիսանց պատմիչ:

Կիշիկեանց պատմիչ:

Շնորհամար պատմիչ:

Պատմագիրք հայոց, զորս ու ունիմք

Ջիխտանն ուսհայեցի: Հերակլ: Խոսրով:

Ղևոնդ: Մերտա: Թովմաս, պատմիչ հարուածոցն բարպայի: Շապոտն բագրատոսինի:

Մովսէ կաղամանուացի՝ պատմիչ արտանիցի: Համամ վարդապետ: Միսիքար անեցի:

Մարկարաց վարդապետ: Վանական վարդապետ: Զարարիան ծործորեցի: Խորեն Մահատունի:

Ազուրանիկ: Ազուրանիկ. և այլք ոմանք:

Ազակեմ զարեկամաշտութիւնդ, զի եթէ զուցի յայզոսիկ կողմանս մի ի նախակարգեալ պատմագրաց, զորս ոչ ունեմց առ մեզ, ծանուցես ինձ. իսկ թէ առ մեզ առաջնուցես մնասցէ յիշատակ ըսյ ի վանս մեր: Այլ թէ չիցէ հնար առագել՝ յայտ արացեն մեզ՝ թէ զտանի արդեօց այդր օրինակօց, և որչափ զնով օրինակէ:

ի մէջ այդոցիկ պատմազրաց առաջին հարկաւորն է շապուհ բազրատունի, երկրորդ Զաքարիա և Խորէն, երրորդ՝ Միքայիլ Արք և վանական, 4-րդ՝ Ռիտանէս, խոսրով և Ղեռնդ: Հինգերորդ՝ Միքատ, թուղմաս, և Մովսէս, վեցերորդ, Սարկա-

ւագ, Համամ, և ապուսանչ, Ընդ այս և թովմա արձրունի, զորոյ զանկատար գործն միայն ունիմք:

յիսկական բնագրոյն ուղիղ օրինակեցի

Յարութիւն թ. Յարութիւննեանց

ԱՄԻՐԴՈՒՎԱԹ ԲԺՇԿԻ “ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ”Ի ՍԻ ՆՈՐ ԶԵՌԱԳԻՐ

Ծ. Հ. Յ.

Երեանում մի մասնաւոր մարզու մօտ կայ Ամիրդուվաթ թժշկի «Անդիտաց անպէս» աշխատութիւնը, որը պատահմամբ ընկաւ ձեռցու և որի հետ ծանօթացայ սրանից մի քանի ամիս առաջ:

Թիշեալ բառարանը կազմած մեծ զիրք է բաւականին լաւ վիճակի. զրբի հաստութիւնը (առանց կազմի) 4 անդմ., երկարութիւնը 32 անդմ., լայնութիւնը 22 անդմ., իւրաքանչիւր էջը երկու սիւնակից. մէկ սիւնակում 45 տող. էջաղորութիւնը թանացով և մատիտով կատարուած է ուրիշ ձեռցով. ընդ ամէնը 405 էջ. Գրուած է թղթի վրայ, նոտրագիր է:

Բժշկական բառարանը սկսում է Ա-ից և այրբենական կարգով հասնում է Ֆ տառին, բռնում է 286 էջ, որի վերջին գրուած է «և Քրիտոսի փառը յակետեանս ամէն»:

Դրանից յետոյ յայտնի չէ ով աւելացրել է մի քանի բառ, 2 էջ. յետոյ 4 էջ դատարկ է և 293 էջից սկսում է Ամիրդուվաթի յառաջարանը:

Բոլոր բառերի թիւն է 1530:

293-րդ էջի նախաշաւաղից յետոյ գրւած է.

«Ի ժամանակին թագաւորին իսմայէս լոց ազգէ սարակինոսաց ի յազգէ հագաւու որ նուազեալ էր թագաւորութիւն յունաց կ մայրաքաղաքին կոստանդնուպոլիս, որ անխախտ կեայ և անսասան այդ քառական ամէն այդ քառական ամէնայն փիլիսոփայիցն. և

էր ի թագաւորութեան սուլթան մեհեմէդ խանին և կաթուղիկոս սուլթան էջմիածին տէր Սարքիսին և հայրապետութեան ի մայրաքաղաքին կոստանդնուպոլուսոյ տէր Նիկողայոսին և թիւն հայոց թօթիւ և ի ոտն սուլթան Նիկողայոսի սքանչելագործ սուլթան հայրապետի թարգմանեցաւ զիրքս այս Ա. Ա. զղեղերուն զատութիւն բազում զրենաց այլ ազգաց ձեռամբ մեղաւոր և անպիտան և անիմաստ թժշկին ամասիացի ամիրուովաթին որ կարդան կամ յաւրինակեն յիշեն հայր մեղայիւ և Քրիստոս յիշէ զինքն ի միւս անզամ Գալստեան ամէն»:

«Եւ զայս շինեցաք և ըստուգեցաք շատ բառերով և պատմութիւններով որ կարդայ հեշտութեամբ յիմանայ և անգէտն չօգտի ի սմանէ. և անուանեցաք զայս զրոյս անուն անգիտաց անպէս և պարտակիմ զիտնաց և ծառայ ամենայն փիլիսոփայիցն. և

Եղիր հետևող իմաստութեան հետ Եւ թէ լուսանիս թժշկի ես անպէտ Լինիս գու զիտուն արա բանիս հետ Եւ այս զիիս անուն անգիտաց անպէտ»:

Այս ոտանաւորից յետոյ յիշում է ըըժիշկներին՝ սկսած մեծ Միքիթարից... յետոյ զրում է իր ճանապարհորդութեան մասին, մեկնում է համառափիւ և մէկ տառով նշանակուած խօսքերը: Մի այլ տեղում զրուած է.